ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
12.01.2023 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
***«ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ» ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ***
հասարակական կազմակերպության 2022 թ. գործունեության մասին

| | |
|---|---|
| **1. Հասարակական կազմակերպության՝** | |
| 1.1 Լրիվ անվանումը | «ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ» ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ |
| 1.2 ՀՎՀՀ-ն | 01212788 |
| 1.3 Գտնվելու վայրը | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ԿՈՐՅՈՒՆԻ 19ա ՇԻՆ.7 |
| 1.4 Պետական գրանցման համարը | 211.171.01966 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | 2003-08-21 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | +(374)91405219 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | www.bridgeofhope.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | www.info@bridgeofhope.am |

| | | |
|---|---|---|
| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
| Անունը | Ազգանունը | Պաշտոնը |
| ՍՈՒՍԱՆՆԱ | ԹԱԴԵՎՈՍՅԱՆ | նախագահ |

3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը

կազմակերպության նպատակն է հասնել սոցիալական , տնտեսական և մշակութային ոլորտներում գոյություն ունեցող անհավասարությունների և խտրականության վերացմանը, որպեսզի հաշմանդամություն ունեցող երեխաներն ու երիտասարդները այլոց հետ համահավասար հնարավորություններով, կարողանան իրացնել իրենց հիմնարար իրավունքներն ու ազատությունները և արժանապատվորեն ապրեն իրենց հայրենիքում

| | |
|---|---|
| **4 Հասարակական կազմակերպության՝** | |
| 4.1 Անդամների թիվը | 169 |
| 4.2 Կամավորների թիվը | 120 |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | 7 |

**6. Իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | ՝Ընտանեկան միջավայր և համայնքային ծառայություններ Հայաստանի երեխաների համարր | Շիրակ, Գեղարքունիք և Կոտայքի մարզեր | Խոցելի խմբերի և հաշմանդամություն ունեցող երեխաների համար ապահովել ներառական կրթական ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունն ու որակը | Ավարտված |
| 2 | Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը ռիսկային իրավիճակներում և համաճարակի ընթացքում | Երևան, Տավուշի, Գեղարքունիքի Կոտայքի և Շիրակին Արագածոտնի մարզեր | Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունների՝ կարողությունների հզորցում՝ լավագույնս պաշտպանելու իրենց շահառուների իրավունքները ռիսկային իրավիճակներում և COVID-19-ի համաճարակի ընթացքում | Ավարտված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | COVID-19 հետևանքների չեզոքացման աջակցության ծրագիր արևելյան գործընկերության երկրներում | Երևան, Տավուշի մարզեր | իրականացնել և իրագործել Տավուշի սահմանամերձ գյուղերում բնակվող դեռահասների ճգնաժամային իրավիճակում սոցիալ հոգեբանական աջակցություն | Ավարտված |
| 4 | 3-6տարեկան ՆՈՒՀ հաճախող երեխաների հոգեբանական ծառայությունների մատուցում | Տավուշի մարզ , Ք. ԲԵրդ | շաբաթական 2 անգամ հաճախականությամբ երեխաներին տրվող հոգեբանական ծառայություն ի | Ավարտված |
| 5 | Բերդի համայնքի Չինար հանրակրթական ուսուցում | Տավուշի մարզ , Ք. ԲԵրդ | Բերդի մասն. 2 հոգեբանական մանկավարժների աշխատավարձերի վճարում | Ընթացքի մեջ |
| 6 | Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ | ՀՀ տավուշի մարզի 5 քաղաքային և 57 գյուղական բնակավայրեր | ՀՀ Տավուշի մարզի բոլոր հանրակրթական նախադպրոցական հաստատություններում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության համար ապահովել նրանց կրթության կազմակերպման աջակցող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների հասանելիությունր | Ավարտված |
| 7 | Հաշմանդամություն ունեցող երեխաների կարողությունների հզորացում | ՀՀ տավուշի մարզի 5 քաղաքային և 57 գյուղական բնակավայրեր | Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքներն ու ազատությունները երաշխավորված են հաշմանդամությունը որպես մարդու իրավունք ներառած օրենքներով, իրավական ակտերով և զարգացման ծրագրերով | Ավարտված |
| 8 | Աջակցություն այսօր՝ հանուն վաղվա անկախ կյանքի | ՀՀ Տավուշի մարզ , ք. Դիլիջան , Իջևան, Բերդ. Նոյեմբերյան | Տրամադրել վերականգնողական ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաներին | Ավարտված |
| 9 | Կազմակերպության ֆինանսական կայունություն ապահովող ծրագիր | Երևան | ապահովել կազմակերպության ֆինանսակական կայությությունր | Ավարտված |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մանկավարժահոգեբանական  աջակցության ծառայություններ | ՀՀ տավուշի մարզի 5 քաղաքային և 57 գյուղական բնակավայրեր | Ավարտված | ՀՀ Տավուշի մաչզի բոլոր հանրակրթական նախադպրոցական հաստատություններում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների  կարիք ունեցող երեխաների կրթության համար ապահովել նրանց կրթության կազմակերպման աջակցող մանկավարժահոգեբանական  աջակցության ծառայությունների հասանելիությունը | Ծառայություններից օգտվել են ընդհանուր թվով 581 երեխաներ նախադպրոցական տարիքի 90 երեխա, \հուհ երում սովորող 491 երեխա: Նրանց տրամադրվել են մանկավարժական, հոգեբանականննն սոցիալական ներառմանն օժանդակող ծառայություններ, ինչպես ուսումնական հաստատություններում , այնպես էլ կազմակերպության կենտրոնում |
| 2 | Բերդի համայնքի Չինար հանրակրթական ուսուցում | Տավուշի մարզ , Ք. ԲԵրդ | Ընթացքի մեջ | Բերդի մասն. 2 հոգեբանական մանկավարժների աշխատավարձերի վճարում | աջակցել համայքի ընտանիքներին , կանանց , երեխաներին |
| 3 | 3-6տարեկան ՆՈՒՀ հաճախող երեխաների հոգեբանական ծառայությունների մատուցում | Տավուշի մարզ , Ք. ԲԵրդ | Ավարտված | շաբաթական 2 անգամ հաճախականությամբ երեխաներին տրվող հոգեբանական ծառայություն ի | աջակցել համայքի ընտանիքներին , կանանց , երեխաներին |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | 221,748,192 |
| 8.2 Գույքը | |
| Ընդամենը | 221,748,192 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | 111,206,900 | Հայաստանի Հանրապետության կրթության , գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն |
| 2 | 361,774 | Չինարի մանկապարտեզ ՊՈԱԿ |
| 3 | 2,090,000 | Բերդի համայնքապետարան |

| Հ/Հ | 9.2 Գույքը | |
|---|---|---|
| 1 | | |
| Ընդամենը | 113,658,674 | |

| **10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝** | | |
|---|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | | 191,925,482 |
| 10.2 Գույքը | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 191,925,482 |

| **11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝** | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | 113,658,674 |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 113,658,674 |

| **12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝** | | | |
|---|---|---|---|
| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
| 1 | | | |
| Ընդամենը | | 0 | |
| Նշումներ | | | |
| | | | |

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________3________ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ______________________
ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ ______________________
ստորագրություն, անունը, ազգանուն

«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 4

հեռ./ֆաքս՝ /010/ 524724

էլ. փոստ : perfectaudit@bk.ru

Կայք www.perfectaudit.am

# Անկախ աուդիտորի եզրակացություն

**«Հույսի կամուրջ» Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության ղեկավարությանը**

***Կարծիք***

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության /այսուհետ Կազմակերպություն/ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա /այսուհետ նաև Հաշվետու ժամանակաշրջան/ ֆինանսական հաշվետվությունը, որոնք ներառում են «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27 մայիսի 2020 թվականի թիվ 477-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի և լրացման կարգի պահանջներով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված ցուցանիշները /այսուհետ նաև Ֆինանսական Հաշվետվություն/:

Մեր կարծիքով, «Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության Հաշվետու ժամանակաշրջանի համար կազմված ֆինանսական հաշվետվությունը տալիս է հանրային միջոցների ստացման և օգտագործման վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկեր և բոլոր էական առումներով համապատասխանում է կնքված պայմանագրի պահանջներին:

***Կարծիքի հիմք***

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների /ԱՄՍ-ներ/ համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի /ՀԷՄՍԽ կանոնագրքի/ և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

*Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ՀԿ գործունեության հաշվետվության համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին,ինչպես նաև ՀՀ ՊԵԿ-ի կողմից սահմանված լրացման կարգին համապատասխան ՀԿ գործունեության հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար,որն ըստ ղեկավարության,անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվության պատրաստումը ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ՀԿ-ի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

***Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար***

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն,որ ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից,անկախ դրա խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը,նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով,և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ,որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է ,քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը,քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն,զեղծարարություն,միտումնավոր բացթողումներ,սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին առընչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ՝ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը,ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ,և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝գնահատում ենք թե՛ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն,որը կարող է էական կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք,որ առկա է էական անորոշություն,ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին,կամ,երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն,ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

## «ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

- գնահատում ենք տարեկան հաշվետվության ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը,ներառյալ՝ բացահայտումները,ինչպես նաև ֆինանսական հաշվետվության հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- ստուգում ենք հանրային միջոցների օգտագործման համապատասխանությունը Պայմանագրերին:
- ստուգում ենք կրկնակի ֆինանսավորումը,համոզվելու համար,որ ծախսերը չեն ֆինանսավորվել կազմակերպության կողմից իրականացվող այլ ծրագրերի գումարներից:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերբերյալ էթիկայի պահանջների,ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին,որոնք ըստ ողջամիտ ենթադրության կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և որտեղ կիրառելի է անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

03 ապրիլ, 2023 թ.

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն Ա. Բաբայան

աուդիտոր Դ. Խաչատրյան

«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» "ПЕРФЕКТ АУДИТ" "PERFECT AUDIT" 02591995

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 13.03.2024 17:53